ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀԾԿՀ-18/1-ԳՀԾՁԲ-2

ք. Երևան «15» 12 2017թ.

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Սաֆարյանի, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի և այլ օրենքների հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ.Բաղդասարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **1.514.200 (մեկ միլիոն հինգ հարյուր տասնչորս հազար երկու հարյուր)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: **Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 7.13 կետով նախատեսված համաձայնագրով սահմանված ամիսներին:**

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[2]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15 րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[2] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[3]

---

[3] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15 րդ հոդվածի 6 րդ մասի հիման վրա:*

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Հանրային ծառայությունները	«Մ-ԲԻ-Ո» ՍՊԸ
կարգավորող հանձնաժողով	ք.Երևան, Մյասնիկյան 22/4
ք.Երևան, Սարյան 22	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
ՀՀ900011183010	ՀՀ 220083335012000
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՎՀՀ 08417829
ՀՎՀՀ 02531594	
Աշխատակազմի ղեկավար՝ Ա. Սաֆարյան	Տնօրեն՝ Վ.Բաղդասարյան
---------- (ստորագրություն)	---------- (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«15» 12 2017թ. կնքված
ՀԾԿՀ -18/1-ԳՀԾՁԲ-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	50111130/305	Kia Cerato մակնիշի (2010թ. , սեդան, 156 ձ/ուժ, 2.0 շարժիչ), Hyundai Elantra (2013թ. , սեդան, 132 ձ/ուժ, 1.6 շարժիչ), Nissan Altima (2008թ. , սեդան, 188 ձ/ուժ, 2.5 շարժիչ) ավտոմեքենայի վերանորոգում համաձայն կից ներկայացված ցուցակի	դրամ	1514200	1	ք. Երևան	Մատակարարումներն իրականացվում են համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա

ՑՈՒՑԱԿ

Հ/Հ	Ծառայության ընթացքում օգտագործվող պահեստամասերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Կիա Սերատո (Kia Cerato) ավտոմեքենայի վերանորոգում	Հյունդայի Էլանտրա (Hyundai Elantra) ավտոմեքենայի վերանորոգում	Նիսսան Ալտիմա (Nissan Altima) ավտոմեքենայի վերանորոգում
1	առջևի արգելակման կոճղակ /կոմպլեկտ/	30,000	30,000	30,000
2	առջևի արգելակման կոճղակների փոխարինում	4,000	4,000	4,000
3	հետևի արգելակման կոճղակ /կոմպլեկտ/	27,000	27,000	27,000
4	հետևի արգելակման կոճղակների փոխարինում	4,000	4,000	4,000
5	օդի զտիչ / 1 հատ /	9,000	9,000	9,000
6	օդի զտիչի փոխարինում	500	500	500
7	կայծաբաշխիչ կոճ / 1 հատ /	28,000	28,000	28,000
8	կայծաբաշխիչ կոճի փոխարինում	2,000	2,000	2,000
9	վառելիքի զտիչ / 1 հատ /	25,000	25,000	25,000
10	վառելիքի զտիչի փոխարինում	5,000	5,000	5,000
11	անտիֆրիզ / 1 լիտր/	2,000	2,000	2,000
12	անտիֆրիզի փոխարինում	2,000	2,000	2,000
13	վառոցքի մոմեր / 4 հատ /	24,000	24,000	24,000
14	վառոցքի մոմերի փոխարինում	6,000	6,000	6,000
15	փոխանցման տուփի յուղ / լիտր /	5,000	5,000	5,000
16	փոխանցման տուփի յուղի փոխարինում	4,000	4,000	4,000
17	շարժիչի յուղ / լիտր/	5,000	5,000	5,000
18	շարժիչի յուղի փոխարինում	1,000	1,000	1,000
19	շարժիչի յուղի զտիչ / 1 հատ /	6,000	6,000	6,000
20	շարժիչի յուղի զտիչի փոխարինում	1,000	1,000	1,000
21	ինժեկտորի ֆարսունկաների մաքրում /4 հատ/	14,000	14,000	14,000
22	առջևի / հետևի / անվարացքի կարգաբերում	10,000	10,000	10,000
23	տեխ.զննում	1,000	1,000	1,000

24	համակարգչային դիագնոստիկա	3,000	3,000	3,000
25	առջևի մեղմիչ / 1 հատ /	70,000	70,000	70,000
26	առջևի մեղմիչի փոխարինում	5,000	5,000	5,000
27	հետևի մեղմիչ / 1 հատ /	60,000	60,000	60,000
28	հետևի մեղմիչի փոխարինում	5,000	5,000	5,000
29	ղեկի գնդաձև հոդակապ / 1 հատ /	15,000	15,000	15,000
30	ղեկի գնդաձև հոդակապի փոխարինում	3,000	3,000	3,000
31	անվադողերի հավասարակշռում / 1 անգամ /	1,000	1,000	1,000
32	կայունարարի վռան /ութնյակ / - / 1 հատ /	11,000	11,000	11,000
33	կայունարարի վռանի /ութնյակ / փոխարինում	3,000	3,000	3,000
34	դիմապակի մաքրող խոզանակ / 1 հատ /	2,000	2,000	2,000
35	գնդաձև հոդակապ / 1 հատ /	15,000	15,000	15,000
36	գնդաձև հոդակապի փոխարինում	4,000	4,000	4,000
37	կայունարարի ռետինե վռան / 1 հատ /	5,000	5,000	5,000
38	կայունարարի ռետինե վռանի փոխարինում	3,000	3,000	3,000
39	ակումուլիատորային մարտկոց /ներառյալ փոխարինումը/ / 1 հատ /	50,000	50,000	50,000
40	ինժեկտորի ֆարսոնկա / 1 հատ /	14,500	14,500	14,500
41	ինժեկտորի ֆարսոնկաի փոխարինում	2,000	2,000	2,000
42	հետևի խլարարի բաք / 1 հատ /	16,500	16,500	16,500
43	հետևի խլարարի բաքի փոխարինում	3,000	3,000	3,000
44	շարժիչի բարձիկ / 1 հատ/	35,000	35,000	35,000
45	շարժիչի բարձիկի փոխարինում	6,500	6,500	6,500
46	փոխանցման տուփի բարձիկ /1 հատ/	26,500	26,500	26,500
47	փոխանցման տուփի բարձիկի փոխարինում	6,500	6,500	6,500
48	դիմահար լամպ / 1 հատ/	5,500	5,500	5,500
49	դիմահար լամպի փոխարինում	1,000	1,000	1,000
50	հեռահար լամպ / 1 հատ /	6,500	6,500	6,500
51	հեռահար լամպի փոխարինում	1,000	1,000	1,000
52	լամպ / 1 հատ /	1,000	1,000	1,000
53	լամպի փոխարինում	500	500	500
54	վառելիքի պոմպ / 1 հատ /	30,000	30,000	30,000
55	վառելիքի պոմպի փոխարինում	5,000	5,000	5,000
56	արգելակման համակարգի հեղուկ / լիտր /	2,500	2,500	2,500
57	խլարարի ռետինե ամրակ / 1 հատ /	1,000	1,000	1,000
58	թերմոստատ / 1 հատ /	18,500	18,500	18,500
59	թերմոստատի փոխարինում	5,000	5,000	5,000
60	շարժիչի ջրի պոմպ / 1 հատ /	25,000	25,000	25,000
61	շարժիչի ջրի պոմպի փոխարինում	8,000	8,000	8,000
62	խլարարի կատալիզատոր / 1 հատ /	20,000	20,000	20,000
63	խլարարի կատալիզատորի փոխարինում	3,500	3,500	3,500
64	պոմպ՝ դիմապակին ջրով մաքրելու համար / 1 հատ /	6,500	6,500	6,500
65	դիմապակին ջրով մաքրող պոմպի փոխարինում	1,500	1,500	1,500
66	հովացման համակարգի ընդարձակման բաք / 1 հատ /	8,000	8,000	8,000
67	ընդարձակման բաքի փոխարինում	1,000	1,000	1,000
68	ընդարձակման բաքի կափարիչ / 1 հատ /	3,000	3,000	3,000
69	առջևի մեղմիչի հենարան առանցքակալով / 1 հատ/	25,000	25,000	25,000
70	առջևի մեղմիչի հենարանի փոխարինում	5,000	5,000	5,000
71	առջևի դարձյակի առանցքակալ / 1 հատ/	15,600	15,600	15,600
72	առջևի դարձյակի առանցքակալի փոխարինում	5,000	5,000	5,000
73	հետևի դարձյակի առանցքակալ / 1 հատ/	15,500	15,500	15,500
74	հետևի դարձյակի առանցքակալի փոխարինում	5,000	5,000	5,000

75	խլարարի վերանորոգում	4,000	4,000	4,000
76	անվադողերի վուլկանացում	8,000	8,000	8,000
77	փոխանցման տուփի հանում և տեղադրում, վերանորոգում	50,000	50,000	50,000
78	Կցորդման սկավառակ / 1 հատ /	100	100	100
79	Կցորդման սկավառակի սալի և սառանցկակալի փոխարինում	100	100	100
80	Կցորդման սալ / 1հատ /	100	100	100
81	Առջևի ձգաձողի վռան / 1 հատ /	12,000	12,000	12,000
82	Կցորդման առանցկակալ / 1 հատ /	100	100	100
83	ղեկի ուժեղարար / 1 հատ /	10,000	10,000	10,000
84	ղեկի ուժեղարարի փոխարինում	8,000	8,000	8,000
85	Ղեկային համակարգ / 1 հատ /	25,000	25,000	25,000
86	ղեկային համակարգի փոխարինում	5,000	5,000	5,000
87	օդի կարգավորման էլեկտրոնային ցուցիչ / 1 հատ /	25,000	25,000	25,000
88	դիմապակի մաքրող հեղուկ / 1 հատ /	3,500	3,500	3,500
89	Արգելակման օդային կարգավորիչ (վակում) /1 հատ/	10,000	10,000	10,000
90	Արգելակման օդային կարգավորիչի (վակում) փոխարինում /1 հատ/	2,200	2,200	2,200
91	Սրահի ֆիլտր /1 հատ/	10,000	10,000	10,000
92	Սրահի ֆիլտրի փոխարինում	1,000	1,000	1,000
93	Ղեկային համակարգ / 1 հատ /	4,000	4,000	4,000
94	Ղեկային համակարգի փոխարինում	8,000	8,000	8,000
95	Ղեկային համակարգի վռան /1 հատ/	4,500	4,500	4,500
96	Ղեկային համակարգի վռանի փոխարինում	100	100	100
97	Ղեկի կոնտակտ /1 հատ/	100	100	100
98	Ղեկի կոնտակտի փոխարինում	1,000	1,000	1,000
99	Ղեկի ուժեղարարի յուղ / լիտր/	4,000	4,000	4,000
100	Ղեկի ուժեղարարի յուղի փոխարինում	2,000	2,000	2,000
101	հետևի լապտերի բլոկ /1 հատ/	5,000	5,000	5,000
102	հետևի լապտերի բլոկի փոխարինում	5,000	5,000	5,000
103	Ապակիների էլեկտրական սեղմիչ /1 հատ/	22,000	22,000	22,000
104	Ապակիների էլեկտրական սեղմիչի փոխարինում	5,000	5,000	5,000
105	Հովացման համակարգի (կոնդիցաների)լիցքավորում	20,000	20,000	20,000
106	Հովացման համակարգի (կոնդիցաների)վերանորոգում	10,000	10,000	10,000
107	Փոխանցման տուփի յուղ /լիտր/	8,000	8,000	8,000
108	Փոխանցման տուփի յուղի փոխարինում	10,000	10,000	10,000
109	Ներքևի լծակի վռան /1 հատ/	12,300	12,300	12,300
110	Ներքևի լծակի վռանի փոխարինում	10,000	10,000	10,000
111	Էլեկտրական մալուխների և սարքերի վերանորոգում	10,000	10,000	10,000
112	հեռահար լամպ՝ քսենոնային / 1 հատ /	2,200	2,200	2,200
113	հեռահար քսենոնային լամպի փոխարինում	2,200	2,200	2,200

** Ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Հանրային ծառայությունները	«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ
կարգավորող հանձնաժողով	ք.Երևան, Մյասնիկյան 22/4
ք.Երևան, Սարյան 22	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
ՀՀ900011183010	ՀՀ 220083335012000
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՎՀՀ 08417829
ՀՎՀՀ 02531594	
Աշխատակազմի ղեկավար՝ Ա. Սաֆարյան	Տնօրեն՝ Վ.Բաղդասարյան
Ստորագրություն՝	Ստորագրություն՝

Հավելված 2
«15» 12 2018թ. կնքված
ՀԾԿՀ-18/1-ԳՀԵՁԲ-2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
«15» 12 2018թ. կնքված
ՀԾԿՀ -18/1-ԳՀԾՁԲ-2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____ -
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն